


2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# «ԵՐԵՎԱՆԻ ԱՐՏԵՄ ՄԻԿՐՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ  
ՄԱՐԳԱՐԻՏ ՊՅՈՏՐԻ ՔՈՒՇԿՅԱՆ



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....5
- ՉԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ .....10
- ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ .....11
- Ծրագրի նպատակը, խնդիրները եւ ակնկալվող արդյունքները.....12
- ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ.....13
- ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....13
- ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .....14
- ԵՐԱՆԻ ԱՐՏԵՄ ՄԻԿՐՈՅԵՆԻ ԱՆՎԱՆ Հ166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ .....16
- ՀԻՄՆԱԿԱՆԴԻՐՆԵՐԸ .....17
- ուսումնական հաստատության գործունեությունը.....19
- Ա.Միկոյանի անվան հ.166 հիմնական դպրոցի օրհներգը.....27
- իրավիճակի վերլուծություն .....28
- շենքային պայմանների վերլուծություն.....28
- Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցի շենքային պայմանների.....35
- բարելավման նպատակով իրականացված աշխատանքները .....35
- swot վերլուծություն.....38
- նպատակ.....40
- խնդիրներ .....40
- ռիսկերի ազդեցությունը մեղմող գործոններ .....40
- շենքային պայմանների բարելավման գործոններ.....41
- շենքային պայմանների բարելավման գործոններ.....44
- նյութատեխնիկական բազայի վերլուծություն .....44
- հաշվետու ժամանակաշրջանում դպրոցի.....49
- նյութատեխնիկական բազայի բարելավման.....49

համար իրականացված աշխատանքներ .....	49
swot վերլուծություն .....	52
նպատակ .....	53
խնդիրներ .....	54
ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ .....	54
նյութատեխնիկական բազայի բարելավման գործողություններ .....	54
նյութատեխնիկական բազայի բարելավման գործողություններ .....	58
կառավարման խորհուրդ .....	58
հաստատության կառավարման մարմնի և տնօրենի .....	61
համագործակցության վերլուծություն .....	61
swot վերլուծություն .....	64
նպատակ .....	65
խնդիրներ .....	65
ռիսկերի ազդեցությունը մեղմող գործոններ .....	66
շենքային պայմանների բարելավման գործոններ .....	66
շենքային պայմանների բարելավման գործողություններ .....	68
դպրոցի խորհրդակցական մարմիններ .....	68
ռիսկերի ազդեցությունը մեղմող գործոններ .....	70
մանկավարժական համակազմի մասնագիտական որակները .....	78
աշխատակազմի արժևորման, խրախուսման և .....	99
ինքնակրթության հնարավորություններ .....	99
swot վերլուծություն .....	103
նպատակ .....	105
խնդիրներ .....	105
ռիսկերի ազդեցությունը մեղմող գործոններ .....	106
մանկավարչական խորհրդի և մեթոդական միավորումների .....	107

աշխատանքների բարելավման գործոնները .....	107
մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացման,.....	109
աշխատակազմի արշևորման, խրախուսման և ինքնակրթության.....	109
հնարավորությունների բարելավման գործողությունների գնահատման ցուցիչ.....	109
ծնողական խորհուրդներ .....	110
swot վերլուծություն.....	121
<input type="checkbox"/> Բավարար չափով չեն պատկերացնում.....	122
նպատակ.....	123
խնդիր.....	123
ռիսկերի ազդեցությունը մեղմող գործողություններ .....	123
ծնողական խորհրդի անխառնքների բարելավման գործողություններ .....	124
ծնողական խորհրդի հետ հանդիպման ժամանակ առաջադրված .....	125
խնդիրների ամփոփ տեղեկանք .....	125
աշակերտական խորհուրդ.....	126
ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԵԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ.....	161
ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ.....	161
դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը .....	180

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*«Գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, որի համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների կատարումը, որն առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն»:*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆԶԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն **ազգային դպրոցն է**, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է: Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման ծրագրի հիմքում ընկած է այն համոզմունքը, որը Հայաստանի Հանրապետության տնտեսության և հանրային կյանքի շարունակական և առաջանցիկ զարգացումը տեսնում է մարդկային կապիտալի զարգացման մեջ շոշափելի ներդրումներ կատարելու միջոցով: Այս տեսանկյունից կրթությանն ուղղված ֆինանսական միջոցները ոչ թե պարզապես ծախս են, այլ անհրաժեշտ ներդրում պետության և հասարակության զարգացման համար:

Կրթությունը դիտվում է իբրև հիմնական միջոց՝ դիմակայելու աղքատության արմատավորմանը, սոցիալական բևեռացման խորացմանը, ժողովրդավարական զարգացումների վտանգմանը, աղետներին և այլ ռիսկերին: Գիտելիքն ու ստեղծարարությունը դարձել են մարդկային կապիտալի զարգացման, տնտեսական և մշակութային կայուն առաջընթացի գրավական:

2020 թվականին բռնկված կորոնավիրուսային հիվանդության համավարակը և 44-օրյա պատերազմի ընթացքն ու հետևանքները ոչ միայն տեսանելի դարձրին կրթական համակարգերում կուտակված խնդիրները, այլև կրթական միջավայրի և բովանդակությանն առնչվող փոփոխության անհրաժեշտությունը:

**«Երևանի Արտեմ Միկոյանի անվան հ.166 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028թ.թ.** դպրոցի զարգացման ծրագրի մշակման ընթացքում հիմք են ընդունել նախորդ հինգ տարիների կրթական, դաստիարակչական, ֆինանսատնտեսական գործունեության կատարողական հաշվետվությունների վերլուծությունները, դրանց արդյունքում ի հայտ եկած կարիքները:

**Դպրոցի զարգացման ծրագրում** ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները» №-35 հրամանի պահանջներին համապատասխան, ըստ ոլորտների սահմանվել են նպատակները, խնդիրները, դրանց լուծման համար նախատեսված միջոցառումները, անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսները, ժամկետները, գնահատման չափանիշները, վերահսկողության մեխանիզմները, պատասխանատուները, ռիսկերը, ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները: Յուրաքանչյուր ոլորտի զարգացմանն ուղղվածությունների նախատեսման հիմքում տվյալ ոլորտի ուժեղ և թույլ կողմերի վերլուծության արդյունքներն են:

Հանրակրթության դերն աճում է, միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ: Պետության և ազգի անվտանգության ապահովմանն ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Գերխնդիրը կրթության կազմակերպման առավել կատարյալ ձևերի և եղանակների մշակումն ու կիրառումն է և դրանցով ուսուցման բարձր որակ ապահովելը:

Հիմնական կրթությունը պարտադիր և հասանելի է յուրաքանչյուր անձին, անկախ նրա հետաքրքրություններից, նախնական մասնագիտական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից: Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգային հիմքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ գույրորդմամբ:

Ըստ հանրակրթության պետական չափորոշչի հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթակաաստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը: Դրանք են՝



Տնտեսական



Լեզվական գրագիտություն



Սովորել սովորելու



$V = \frac{4}{3} \pi r^3$   
Մաթեմատիկական գիտատեխնիկական



Կարողություններ



Ինքնաձևանաչողական և սոցիալական



Մշակութային



Թվային և մեդիա



Ժողովրդական և քաղաքացիական

«Երևանի Արտեմ Միկոյանի անվան հ.166 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակվել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետի պահանջի համաձայն:

Չարգացման ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել՝

- ⊗ « ՀՀ Սահմանադրությունը»
- ⊗ «Կրթության մասին» ՀՀ օրենքը
- ⊗ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- ⊗ «ՊՈԱԿ-ների մասին» ՀՀ օրենքը
- ⊗ «Երեխայի իրավունքի մասին» ՀՀ օրենքը
- ⊗ «ՀՀ Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին ՀՀ օրենքը
- ⊗ «ՀՀ ԿԳՄՄ նախարարի 2022 թ. սեպտեմբերի 22-ի «Պետական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու և ՀՀ ԿԳՄՄ նախարարի 2021 թվականի հունվարի 15-ի № 16-Ն հրամանն ուժը կորցրած նանաչելու մասին» №35 հրամանը»
- ⊗ «ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը
- ⊗ «Հանրակրթության պետական չափորոշիչը»
- ⊗ ՀՀ ԿԳՄՄ նախարարի՝ 05 օգոստոսի 2022թ. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին» № 30-Ն հրամանը և կրթության ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերը



- ☉ Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը
- ☉ Հինգ տարիների ներքին գնահատման հաշվետվությունները
- ☉ ՆԴՎ պլանը
- ☉ Տնօրենի, փոխտնօրենների, մեթոդական միավորների նախագահների, դասղեկների, խմբակների ղեկավարների հաշվետվությունները



## ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Դպրոցի զարգացման ծրագիրը հաստատության ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է 2023-2028 թվականների ուսումնադաստիարակչական աշխատանքները հաստատությունում: Ծրագիրն ընդգրկել է հետևյալ բաղադրիչները բաղադրիչները՝

- ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
- ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ . ՈՒՏԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄԸ
- ՄԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
- ՊԱՏԱՄԽԱՆԱՑՈՒՆԵՐԸ
- ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
- ՌԻՄԿԵՐԸ
- ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐԴՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

<b>Հաստատության անավանուճը</b>	<b>«Երևանի Արտեմ Միկոյանի անվան հ.166 հիմնական դպրոց» ՊՈԱԿ</b>
Հասցեն	ՀՀ, ք.Երևան, Նոր Նորք վարչական շրջան, Մառի 8
Շենքի տեսակը	1.Գլխավոր ուսումնական մասնաշենք (տիպային) 2.Առաջին ուսումնական մասնաշենք (հարմարեցված)
Մասնաշենքերի քանակը	1.Գլխավոր ուսումնական մասնաշենք - 7 2.Առաջին ուսումնական մասնաշենք - 2
Հարկերի թիվը	2
Շենքի զբաղեցրած մակերեսը	1.Գլխավոր ուսումնական մասնաշենք – 8548.9քմ 2.Առաջին ուսումնական մասնաշենք - 2357,6քմ
Հիմնադրման տարեթիվը	1974
Կառուցման տարեթիվը	1.Գլխավոր ուսումնական մասնաշենք – 1974 թիվ 2.Առաջին ուսումնական մասնաշենք-1972 թիվ
Ելքերի քանակը	7, որից 3 հիմնական, 4 պահուստային
Նախագծային հզորությունը (աշակերտ)	1500
Աշխատանքային ռեժիմը	Հնգօրյա, միափերթ
Կազմակերպատիրական ձևը	ՊՈԱԿ
Սովորողների թիվը	1307 (2023-2024 ուսումնական տարվա սեպտեմբերի տվյալներ)
Աշխատակիցների ընդհանուր թիվը	112

Պաշտոնական կայք	<a href="http://yerevan166.schoolsite.am">yerevan166.schoolsite.am</a>
Էլեկտրոնային փոստի հասցե	<a href="mailto:school166@mail.ru">school166@mail.ru</a> , <a href="mailto:school166@schools.am">school166@schools.am</a>
Սոցիալական հարթակ	<a href="https://www.facebook.com/166school.A.Mikoyan">https://www.facebook.com/166school.A.Mikoyan</a>

**ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**



**Արտեմ Միկոյանի անան հ. 166 հիմնական դպրոցը սովորողների նկատմամբ բարի և ուսուցիչների համար գրավիչ ուսումնական հաստատություն է, որն իր առաքելությունը տեսնում է ժամանակակից աշխարհում իր մասնագիտական և սոցիալական հաջողությունն ապահովող բաց, մոտիվացնող կրթական միջավայր ստեղծելու մեջ:**

Ժամանակակից աշխարհում ավելի հաճախ խոսվում է ոչ թե մարդու կրթության, այլ սովորելու իրավունքի մասին, հետևաբար անհրաժեշտ է սովորելը դարձնել ազգային կենսակերպ, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության վերափոխման մինչև 2050 թվականի ռազմավարության տեսլականին և շեշտադրում, կրթական համակարգում փաստացի ներգրավված լինելուց գատ, նաև լիարժեք և արդյունավետ ընդգրկման խնդիրը: Որակյալ կրթության արդյունավետ միջավայրի հասանելիությունը դառնում է առանձին մարդու կարողությունների զարգացման գլխավոր հարթակը, որն իր հերթին ապահովում է կրթության՝ իբրև հանրային բարիքի իրացման երաշխիքը:

**Երևանի Արտեմ Միկոյանի անվան հ.166 հիմնական դպրոցի** 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը դպրոցի կառավարման ռազմավարական փաստաթուղթն է, որը նախատեսում է գործողությունների և միջոցառումների համալիր իրականացում և կրթության ոլորտում **պետական քաղաքականության** նպատակներին հասնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծում :

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ



Հայաստանի Հանրապետության պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան կրթական միջավայրի ստեղծում՝ ստեղծագործական, անկախ, մարդասեր անհատականության ձևավորման համար, որը կարող է գնահատել իրեն և հարգել ուրիշներին: Կրթել ու դաստիարակել այնպիսի սերունդ, ովքեր կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության արժանի քաղաքացիներ, ովքեր սիրում են իրենց ընտանիքը, իրենց տունը, իրենց հայրենիքը, ովքեր պատրաստ են բարոյական վարքագծի և քաղաքացիական պարտականությունների կատարմանը:

## ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ



- ❁ **Ժամանակակից կրթական միջավայրի ստեղծում**, որը կնպաստի սովորողների անհատական հատկանիշների բացահայտմանը, անհատի մտավոր, բարոյական, հուզական, ֆիզիկական զարգացմանը, սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը, որոնք միասին հնարավորություն կստեղծեն նրանց ինքնորոշման և ինքնիրացմանը ժամանակակից պայմաններում:
- ❁ **Կրթական գործընթացի որակի և արդյունավետության բարձրացում**, որը միտված կլինի կրթության բովանդակության, որակի, կրթական գործընթացի գնահատման ժամանակակից մեթոդները հասարակության պահանջներին համապատասխանեցնելուն:
- ❁ **Կրթության նորարարական ոլորտի և լրացուցիչ կրթական ծառայությունների համակարգի զարգացում**, որը կնպաստի հանրակրթական պետական չափորոշչով սահմանված ուսումնառության վերջնարդյունքների ապահովումը:
- ❁ **Հանրակրթական պետական չափորոշիչների պահանջներին համապատասխան դպրոցի նյութատեխնիկական և կրթական բազայի ամրապնդում և զարգացում**

- ❁ Ուսումնական գործունեության համար բարենպաստ և մոտիվացնող մթնոլորտի ձևավորում**, որը կապահովի համագործակցության և փոխըմբռնման մթնոլորտ:
- ❁ Ուսումնական գործընթացում երեխաների առողջության պահպանումն ու ամրապնդումը**, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հարմարավետ պայմանների ապահովումը:
- ❁ Մանկավարժների մասնագիտական որակավորման բարձրացմանը միտված գործողությունների շարունակական կազմակերպում**, որը կնպաստի նոր բովանդակության և նորարարական կրթական մեթոդների ու մոտեցումների, առարկայական նոր չափորոշիչների ներդրմանը, մասնագիտական բարձր որակներով մանկավարժական համակազմի ձևավորմանը:
- ❁ Մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական գործունեության նպաստող միջոցառումների կազմակերպում:**
- ❁ Ներդրոցական վերահսկողության բարելավում**, որը կնպաստի մանկավարժների հաշվետվողականության բարձրացմանը:
- ❁ Սովորողների ֆունկցիոնալ գրագիտության ձևավորում (ներառյալ բնագիտական, ընթերցանության և մաթեմատիկական գրագիտությունը)** և դրա համար անհրաժեշտ առարկայական իրավասությունները:
- ❁ Շենքային պայմանների բարելավում**, որը կնպաստի ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետությանը, կապահովի բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հարմարավետ պայմանների ապահովում:



- ☒ Նոր կրթական տեխնոլոգիաներին և սկզբունքներին համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպում, տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, հեռավար ուսուցման տեխնոլոգիաների զարգացում
- ☒ Ուսումնառության արդյունքների հիմնական ցուցանիշների բարելավում, կրթության որակի ապահովում
- ☒ Մովորողների կրթության որակի ներդրողական վերահսկողության կատարելագործված համակարգ
- ☒ Մովորողների հատուկ կարողությունների (մաթեմատիկական, տեղեկատվական, բնագիտական, տեխնոլոգիական և այլն) զարգացում՝ մասնագիտական կողմնորոշման ուսուցման պայմաններում, ստեղծագործական զարգացման կրթական միջավայրի միջոցով.
- ☒ Մասնագիտական բարձր որակներ ունեցող ուսուցիչների առկայություն (տարակարգ ունեցող, կամավոր ատեստավորման դիմող ուսուցիչների թվի ավելացում)
- ☒ Կրթության առանձնահատուկ պայմանների ապահովում , այդ թվում՝ բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) սովորողների համար
- ☒ Ուսումնական հաստատության մարդկային և նյութական ռեսուրսները օգտագործելով ունենալ ընդլայնված լրացուցիչ և այլընտրանքային կրթական ծրագրերի ցանկ
- ☒ Մովորողների՝ սովորելու և կրթական գործընթացում ներգրավվելու մոտիվացիա
- ☒ Մովորողների մշակութային, սպորտային և կրթական զարգացման համար տարածքների ընդլայնման պայմաններ
- ☒ Տաղանդավոր երեխաների բացահայտման և վերապատրաստման համար առավել բարենպաստ պայմաններ
- ☒ Կրթական միջավայրում անվտանգ,մատչելի պայմաններ
- ☒ Հանրակրթական պետական չափորոշիչների պահանջներին բավարարող նյութատեխնիկական բազա( լաբորատորիաներ, սարքավորումներ, նյութեր, անհրաժեշտ սպորտային գույք), հագեցված գրադարանային և տեղեկատվական համակարգ.
- ☒ Դպրոցի զարգացմանը ներգրավված կրթական համակարգի մասնակիցներ(սովորողներ, ուսուցիչներ, ծնողներ (օրինական ներկայացուցիչներ), հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ
- ☒ Ուսումնական հաստատության և ծնողական համայնքի համատեղ գործունեության համակարգ

☰ Փոխվստահության, փոխադարձ հարգանքի և համագործակցության միջավայրի առկայություն, կրթական գործընթացի մասնակիցների սովորող, սովորողի ծնող և ուսուցիչ, վարչական, այլ մանկավարժական ախատողների փոխադարձ կապի ապահովում:

## ԵՐԼԱՆԻ ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և

մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: Ժամանակակից աշխարհում ավելի հաճախ խոսվում է ոչ թե մարդու կրթության, այլ սովորելու իրավունքի մասին, հետևաբար անհրաժեշտ է սովորելը դարձնել ազգային կենսակերպ, որը համապատասխանում է Հայաստանի վերափոխման մինչև 2050 թվականի ռազմավարության տեսլականին և շեշտադրում, կրթական համակարգում փաստացի ներգրավված լինելուց զատ, նաև լիարժեք և արդյունավետ ընդգրկման խնդիրը: Որակյալ կրթության արդյունավետ միջավայրի հասանելիությունը դառնում է առանձին մարդու կարողությունների զարգացման գլխավոր հարթակը, որն իր հերթին ապահովում է կրթության՝ իբրև հանրային բարիքի իրացման երաշխիքը:

Դպրոցի առաքելությունն է հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան ստեղծել հարմարավետ կրթական միջավայր, որը կնպաստի սովորողների կարողություններին և հետաքրքրություններին համապատասխան ինքնիրացման, գիտակցված անհատական ինքնորոշման և տեղեկատվական հասարակության կյանքին պատրաստ ակտիվ անհատականության ձևավորմանը:





Հարմարավետ կրթական միջավայրի ստեղծումը նպաստում է սովորողների անհատական հատկանիշների բացահայտմանը, անհատի մտավոր, բարոյական, հուզական, ֆիզիկական զարգացմանը, սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը, որոնք միասին հնարավորություն են տալիս նրանց ինքնորոշման և ինքնիրացմանը ժամանակակից պայմաններում:



Սովորողի «ակտիվ անհատականության» արժեքը ուսումնական գործընթացում ամենակարևորն է դպրոցի զարգացման ծրագրում: Այլ կերպ ասած, դպրոցը թույլ է տալիս ձեռք բերել որակյալ կրթության բարձր մակարդակ սովորելու մոտիվացված սովորողների համար: Մոտիվացիան ներքին շարժիչ ուժ է, որը ստիպում է մարդուն աշխատել իր վրա և իրականացնել իր ծրագրերը:

Սովորողների մոտիվացիայի հնարավորությունների զարգացումն ու օգտագործումը կրթական գործընթացում դպրոցի զարգացման ծրագրի հայեցակարգային գաղափարն է:



Բարեփոխումների շոշոփելի և հասարակության կողմից արժևորվող ձեռքբերումների բացակայության պահանջով դպրոցը ամբողջ կրթական համակարգի հետ հայտնվել է մի իրավիճակում, երբ խաթարված է կրթական հաստատությունների հեղինակությունը, վտանգված է վստահությունը բարեփոխումների և համակարգի ներուժի նկատմամբ: Չնայած դրան և հասարակական գիտակցության, և պետական քաղաքականության մեջ կրթությունը հատկապես որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում որպես ազգային և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

## ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ



- ⊗ *Կրթության տարբեր աստիճաններում կրթության որակի մշտադիտարկում, կրթության բովանդակության համապատասխանեցում չափորոշահեն կրթության պահանջներին:*
- ⊗ *Կրթական միջավայրի շարունակական բարելավում՝ հաշվի առնելով 21-րդ դարի կրթության պահանջները, սովորողների առանձնահատկություններն եւ համայնքի և աշխատաշուկայի կարիքները*
- ⊗ *Մանկավարժական համակցմի շարունակական մասնագիտական որակավորման և բարելավմանը և անհատական զարգացմանը նպաստող միջոցառումների ձեռնարկում*
- ⊗ *Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը նպաստող միջոցառումների իրականացում*
- ⊗ *Սովորողներին՝ որպես իրավագիտակից և սոցիալապես պատասխանատու քաղաքացիներ պատրաստելու գործընթացին նպաստող միջոցառումների նախաձեռնում՝ կամավորական և հասարակական աշխատանքների շրջանակի ընդլայնում*
- ⊗ *Մասնակցային եւ համագործակցային կառավարման իրականացման համար անհրաժեշտ գործողությունների պլանի մշակում և առաջնահերթությունների որոշում, ծնողական համայնքի ներգրավվածության բարձրացում և գործընկերների շրջանակի ընդլայնում*
- ⊗ *Մանկավարժական համակցմի, աշակերտական համայնքի առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում, բուլինգի կանխարգելում, կրթության բոլոր մասնակիցների միջև առողջ համագործակցային հարաբերությունների ապահովում*
- ⊗ *Նյութատեխնիկական բազայի համալրում՝ հիմնական եւ լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու, ուսուցման նորարարական մեթոդներ կիրառելու նպատակով*
- ⊗ *Ենթակառուցվածքների և շենքային պայմանների բարելավում՝ որակյալ կրթության հասանելիությունն ապահովելու նպատակով, այդ թվում կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների համար*
- ⊗ *Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման առաջընթացն արձանագրելու և նպատակներին հասնելու համար անհրաժեշտ մոնիտորինգի և գնահատման գործիքների և մեխանիզմների ստեղծում բարելավում:*

© *Դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնելու համար սահմանափակ քայլերի և գործողությունների առաջնահերթությունների որոշում*



## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



Դպրոցը հիմնադրվել է 1974թվականին: Այն գտնվում է Երևանի ամենաբարձր կետում՝ Նոր Նորքի 5-րդ զանգվածում, Մառի 8 հասցեում: Երևանի թիվ 166 միջնակարգ ռուսական դպրոցն ունեցել է հայկական դասարաններ: 1987 թվականին հայկական դասարաններն առանձնացել են և հիմնադրվել է Երևանի թիվ 193 միջնակարգ դպրոցը: 1997 թվականին Երևանի թիվ 166 և թիվ 193 միջնակարգ դպրոցները վերամիավորվել են՝ Երևանի թիվ 166 միջնակարգ դպրոցի անվան տակ: Դպրոցական շենքը բաղկացած է երկու՝ Գլխավոր ուսումնական և Առաջին մասնաշենքերից, որոնք ունեն առանձին սեփականաշնորհման վկայականներ, տեղակայված են Մառի փողոցի տարբեր կողմերում՝ 400 մետր հեռավորության վրա: Դպրոցի Գլխավոր ուսումնական մասնաշենքը տիպային, երկհարկանի շենք է, կառուցվել է 1974 թվականին: Առաջին ուսումնական մասնաշենքը մանկապարտեզի տիպային երկհարկանի շենք է՝ հարմարեցված է դպրոցի, կառուցվել է 1972 թվականին: Առաջին ուսումնական մասնաշենքում տեղակայված են դպրոցի I-IV դասարանները թվով **596** աշակերտ, իսկ Գլխավոր ուսումնական մասնաշենքում՝ V-IX դասարանները՝ **712** աշակերտով: Յուրաքանչյուր մասնաշենք ունի առանձին կաթսայատուն:

Դպրոցը Նորքի V զանգվածի միակ հիմնական դպրոցն է: Ամենամոտ գտնվող դպրոցը հ.159 ավագն է, որը գտնվում է 800 մետր հեռավորության վրա:



Երևանի Արտեմ Միկոյանի անվան հ.166 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը իր գործունեությունը կազմակերպում է՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ: Դպրոցի կանոնադրությունը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետեզիստի տարածքային բաժնում 10.01.2003թ. (գրանցման թիվ 282.210.04547 վկայական 03Ա-057671): Փոփոխությունների է ենթարկվել:

© *18.10.2017թ. գրանցված պետական գրանցման տարածքային բաժնում և հաստատվել Երևանի քաղաքապետի 04.10.2017թ.-ի հ. 3458-Ա որոշմամբ:*

🌱 06.11.2020թ.. գրանցված պետական գրանցման տարածքային բաժնում և հաստատվել էրևանի քաղաքապետի 19.10.2020թ.-ի հ.3271-Ա որոշմամբ

🌱 Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թվականի նոյեմբերի 27-ի N1390-Ա/Ք-ի հրամանով տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

- ➔ տարրական ընդհանուր 650 սահմանային տեղով
- ➔ հիմնական ընդհանուր 800 սահմանային տեղով
- ➔ ՀՀ կառավարության 11.06.2009թ. 664-Ն որոման 3-րդ կետ-ի համաձայն դպրոցը դարձել է հիմնական:
- ➔ 2007 թվականի նոյեմբերի 17-ին դպրոցն անվանակոչվել է աշխարհահռչակ ավիոկոնստրուկտոր Արտեմ Միկոյանի անունով:



**2011-2012 ուստարվանից** ՀՀ ԿԳ նախարարարի N563-Ա/Ք 16.05.2011 թ. հրամանի համաձայն դպրոցի 2-9-րդ դասարաններում իրականացվում է **ռուսաց լեզվի խորացված ուսուցում**:

**2011-2012 ուստարում** մանկավարժական խորհուրդը 3-րդ օտար լեզու ընտրել է ֆրանսերենը և ՀՀ ԿԳ նախարարի թույլտվությամբ իրականացրել է ֆրանսերենի ուսուցումը 5-րդ դասարանից մինչև 2014-2015 ուստարին:

**2012-2013 ուսումնական տարվանից** դպրոցն իրականացնում է ներառական կրթություն:

Դպրոցն ունի Արտեմ Միկոյանի անվան հուշասրահ և 2020 թվականի 44-օրյա պատերազմի զոհերին նվիրված Փառքի սրահ:

2022 թվականի հունվարի 27-ին դպրոցի 5 դասասենյակ անվանակոչվել են 2020 թվականի 44-օրյա պատերազմին զոհված 7 շրջանավարտների անունով.

- ➔ **ՆԶԳ-ի դասասենյակ- Արցախի հերոս Դավիթ Առուշանյանի անունով**
- ➔ **Վե դասասենյակ-Արեգ Հարոյանի և Գոռ Ավետիքյանի անուններով**
- ➔ **VIIե դասարան-Արման Առաքելյանի անունով**

- **VIII Ե դասարան-հայր և որդի Գևորգ և Աշոտ Սաղաթեյանների անունով**
- **Գրականության դասասենյակ- Ռոբերտ Անանյանի անունով**



Դպրոցում բարձր մակարդակի վրա է դրված ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Դրա վառ ապացույցն են Վազգեն Մարգարյանի անվան ռազմական համալսարանի հետ սերտ կապն ու համագործակցությունը: Համալսարանի հետ ունենալով համատեղ միջոցառումների պլան՝ 2018-2023 թվականների ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ էքսկուրսիաներ, արիության դասեր, կազմակերպվել են համատեղ միջոցառումներ: Ռազմական համալսարանի ավարտական կուրսի ուսանողները իրենց ուսումնական պրակտիկան անցկացրել են մեր դպրոցում:



Դպրոցի VIII-IX սովորողների մասնագիտական կողմնորշմանը նպաստող միջոցառումների շրջանակներում իրականացվել են տարաբնույթ էքսկուրսիաներ, դպրոցում կազմակերպվել են հանդիպումներ տարբեր մասնագիտություններ ունեցող ինչպես ծնողական համայնքի ներկայացուցիչների հետ, այնպես էլ հրավիրված մասնագետների(մասնագիտությունների ընտրությունը կատարվել է ավարտական դասարանների սովորողների շրջանում նախապես իրականացված հարցումների միջոցով):



Վերջին տարիներին դպրոցում սահուն ձևով իրականացվել է սերնդափոխություն: Բազմավաստակ, արհեստավարժ և երկարամյա աշխատանքային փորձ ունեցող ուսուցիչներին եկել են փոխարինելու երիտասարդ և գիտակ մասնագետներ, որոնց հետ պարբերաբար տարվել են մասնագիտական կարողությունների զարգացմանը նպաստող միջոցառումներ:

Յուրաքանչյուր տարի ուսուցիչների 1/5-րդը պետք է մասնակցի ուսուցիչների հերթական ատեստավորման նպատակով կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին և ատեստավորվեր: Սակայն 2019 և 2020 թվականներին ուսուցիչների հերթական ատեստավում չի կազմակերպվել՝

Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգում փոփոխություններով պայմանավորված: Ուստի

հաջորդ՝ 2021, 2022 և 2023 թվականներին հերթական ատեստավորմանը մասնակցել են համապատասխանաբար դպրոցի ուսուցիչների 20, 40, 40 %:




2020 թվականի համավարակով և 44-օրյա պատերազմով պայմանավորված՝ դպրոցի ուսուցչական անձնակազմը ֆորսմաժորային իրավիճակներում դրսևորել է արագ կողմնորոշվելու, ինքնակազմակերպվելու, համախմբվելու բարձր որակներ՝ արագ տիրապետելով ՏՀՏ գործիքակազմին և հեռավար ուսուցման մեթոդներին:

Դպրոցում ուսուցանվում է երկու օտար լեզու՝ ռուսերեն, անգլերեն : Երկարօրյա ուսուցման խմբերի թիվը նախորդ հինգ տարիների ընթացքում երեքն է եղել՝ երկարօրյա դաստիարակների վճարումը իրականացվել է պետական միջոցների հաշվին: 2023-2024 ուստարվանից երկարօրյա ուսուցմը կազմակերպվում է ԿԳՄՄ նախարարի 2023



թվականի սեպտեմբերի 4-ի N 113-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի» պահանջին համապատասխան: Դպրոցի կառավարման խորհրդի 15.09.2023թ.հ.1 նիստի որոշմամբ երկարօրյայի վարձավճարը սահմանվել է ամսեկան 5000(հինգ հազար)ՀՀ դրամ:Երկարօրյա ուսուցման խմբում ընդգրկված են դպրոցի I-IV դասարանների թվով 25 սովորող: Ծնողների և նրանց ընտանիքների կարիքի գնահատումից պարզ դարձավ ,որ անհրաժեշտություն կա 2-րդ երկարօրյա խմբի բացման: 2023-2024 ուստարում դպրոցում

անվճար հիմունքներով գործում են «Բանավեճի ակումբ» , «Վրձնի լեզուն», «երաժշտական» արտադասարանական խմբակները, որոնք մեծ ներդրում ունեն սովորողների դիրքորոշումների և արժեքային համակարգի ձևավորման գործում: Վերջիններս՝ որպես հանրակրթության բովանդակության բաղադրիչներ, սահմանված են հանրակրթության պետական չափորոշչով:



2023 թվականի ապրիլին դպրոցը հուշագիր է ստորագրել «Ինտերակտիվ կրթության զարգացում» հիմնադրամի հետ՝ ԿԳՄՄՆ-ի կողմից երաշխավորված ՏՀՏ անվճար դասընթացներ իրականացնելու համար: Դասընթացն իրականացվում է 10-14 տարեկան դպրոցականների համար: Դասընթացի ընթացքում ուսուցանվում են «Համակարգչային գրագիտություն»,



«Փոստ և վիդեո խմբագրիչներ, Web ծրագրավորման հիմունքներ» և «Ինժեներական արվեստ, Web ծրագրավորման հիմունքներ»:



Մասնագիտական կողմնորոշման նպատակով իրականացվող միջոցառումների շրջանակներում դպրոցի ավարտական դասարանների սովորողների համար կազմակերպվում տարատեսակ միջոցառումներ, ուսուցողական էքսկուրսիաներ: Դպրոցը սերտ համագործակցում է Նոր Նորք վարչական շրջանում գտնվող ավագ դպրոցների հետ: Մասնավորապես 198 ավագ դպրոցի տնօրենության առաջարկով, ուսումնական տարվա ընթացքում մի քանի անգամ մասնակցում ենք առարկայական վիկտորինաների, իրականացնում ենք



հետագոտական աշխատանքներ, որոնց ամփոփում տեղի է ունենում կենդանաբանական և բուսաբանական այգում: 142 դպրոցը յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իրականացնում է «Բաց դռների օր» միջոցառումը, որի ակտիվորեն մասնակցում է նաև մեր դպրոցը:

Դպրոցի սովորողների արտադպրոցական ժամանցն ապահովելու համար, տարիներ շարունակ դպրոցի 2 ուսումնական մասնաշենքերի մարզադահլիճները վարձակալական հիմունքներով տրամադրվել են սպորտային և մշակութային նպատակով պարապմունքներ անցկացնելու համար: Դպրոցում վարձակալական հիմունքներով գործում են «Էրեվան» հայկական-ժողովրդական պարերի համույթը, «Վերոյանս Դենս » հիպ-հոպ ոճի սպորտային պարերի համույթը, Ֆուլ կոնտակտ կառատեի սպորտային խումբը: Դպրոցը համագործակցում է Ռուդոլֆ Կարապետյանի անվան մազադպրոցի հետ: Մարզադպրոցի մարզիչները վոլեյբոլի անվճար պարապմունքներ են անցկացնում մեր դպրոցի բարձր դասարանների սովորողների հետ:



Դպրոցն ունենալով 1300-ից ավել աշակերտական համակազմ, աշխատում է միահերթ, հնգօրյա աշխատանքային ռեժիմով:



Յուրաքանչյուր **ամսվա 18-ը դպրոցում ծնող-ուսուցիչ** հանդիպման օր է (բացառությամբ շաբաթ, կիրակի և տոնական օրերի):

Ուսումնական տարվա ընթացքում 2 անգամ անցկացվում է ծնողական համալսարանի նիստ: Ծնողական համալսարանի գործունեությունը մեծապես նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշման, ծնող-դպրոց, սովորող – ծնող հարաբերություններում բացահայտված խնդիրների լուծման և տեղեկատվության ապահովման գործընթացներին:

2020 թվականի 44-օրյա պատերազմի օրերին դպրոցն ընդունել էր արցախցի 115 սովորող, իսկ 2023 թվականի սեպտեմբերին-հոկտեմբեր ամիսներին Արցախից բռնի տեղահանված ընտանիքների 65 սովորող: Ներկա պահին դպրոցում սովորողների թիվը 1361 է:

Դպրոցի աշխատակիցների ընդհանուր թիվը 112 է, որից 6-ը վարչական, 87 մանկավարժական, 19 սպասարկող( աղյուսակ 1 և 2): Աշակերտական համակազմը 2023-2024 ուստարվա սեպտեմբերի 16-ի դրությամբ 1308 է եղել, ձևավորվել է 45 դասարան, որից 20-ը I-IV դասարաններն են, 25-ը՝ V-IX :

Դպրոցն ունի օրհներգ և լոգո:





*Խոսք և երաժշտություն  
Պետրոս Չեղճունցու*

Դպրո՛ց, դպրո՛ց,  
Հայ ոգու անառիկ դու ամրոց,  
Մեր մտքի մշտավառ դարբնոց,  
Մեր բարի, սիրելի ուսուցիչ.  
Դու կյանքի մշտարթուն զարթուցիչ:  
Մեր բարի, սիրելի ուսուցիչ.  
Դու կյանքի մշտարթուն զարթուցիչ:  
  
Դպրո՛ց, դպրո՛ց,  
Դու մեր մայր, դու մեր մայր արահետ,  
Առանց քեզ կկորչենք մենք անհետ:  
Հայրենի երկրում մեր ազատ, մեր ազատ,  
Թող հնչի զանգը քո հարազատ:



# ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Արտեմ Միկոյանի անվան հ. 166 հիմնական դպրոցը հիմնադրվել է 1974 թվականին, Երևանի ամենաբարձր կետում՝ Նորքի V զանգվածում: Դպրոցական շենքը բաղկացած է երկու ` Գլխավոր ուսումնական և Առաջին մասնաշենքերից, որոնք ունեն առանձին սեփականաշնորհման վկայականներ, տեղակայված են Մառի փողոցի տարբեր կողմերում՝ 400 մետր հեռավորության վրա : Դպրոցի Գլխավոր ուսումնական մասնաշենքը տիպային, երկհարկանի պանելային շենք է, կառուցվել է 1974 թվականին: Առաջին ուսումնական մասնաշենքը մանկապարտեզի տիպային երկհարկանի քարե շենք է ` հարմարեցված է դպրոցի, կառուցվել է 1972

թվականին : Երկու մասնաշենքերն էլ թեք տանիքներով են: Դպրոցը պետական ծրագրով վերջին անգամ վերանորոգվել է **1984 թվականին:**

### *Մնացած բոլոր վերանորոգումները սկսած 2008 թվականից իրականացվել են դպրոցի տնտեսած ֆինանսական միջոցների հաշվին*

Դպրոցի վերանորոգման աշխատանքները իրականացվել են փուլերով և աստիճանաբար: Երկու մասնաշենքերի տանիքները վերանորոգված են, փայտյա պատուհանները փոխարինված են եվրոպական արտադրության պատուհաններով: 2022 թվականին առաջին մասնաշենքի մանրահատակը փոխարինվել է սալահատակով: Գլխավոր ուսումնական մասնաշենքի մանրահատակը գտնվում է անմխիթար վիճակում՝ տեղ-տեղ բացակայում է և ենթական է հիմնանորոգման:

Առաջին մասնաշենքի դասասենյակների մակերեսները շատ փոքր են չեն համապատասխանում սանիտարահիգիենիկ նորմերին(չի պահպանվում մեկ սովորողի համար նախատեսված 2,5 քմ): Աշակերտական առաջին սեղանը գրատախտակից գտնվում է 0,5 մետր հեռավորության վրա: Երկարօրյան պարապմունքների համար նախատեսված առանձին դասասենյակներ չկան: Գլխավոր ուսումնական մասնաշենքի դասասենյակների մակերեսները համապատասխանում են նորմերին:



Պարբերաբար իրականացվել են կոյուղագծերի և սանհանգույցների վերանորոգումներ: Սանհանգույցների թիվը աշակերտների թվաքանակին համապատասխան նորմատիվային քանակին չի համապատասխանում: Գլխավոր ուսումնական մասնաշենքի

սովորողների համար նախատեսված 16 սանհանգույցներից 8-ը դեռևս Խորհրդային տարիներին ապամոնտաժվել են: Նույն պատկերն է նաև Առաջին մասնաշենքում՝ 8 սանհանգույցներից ապամոնտաժվել է 4-ը:

Դպրոցն ունի Գլխավոր մասնաշենքում գտնվող 1 մարզադահլիճ՝ 291 քմ մակերեսով: Առաջին մասնաշենքը մարզադահլիճ չունի, քանի որ այն մանկապարտեզի տիպային շենք է, հարմարեցված դպրոցի: Որպես մարզադահլիճ ծառայում է հանդիսությունների համար նախատեսված 73 քմ մակերեսով դահլիճը, որը վերանորոգվել է դպրոցի վարձակալ՝ հիպ-հոպ սպորտային պարերի պարուսույց Գևորգ Վերդյանի միջոցներով: Գլխավոր ուսումնական մասնաշենքի մարզադահլիճը մասնակի վերանորոգվել է 2020 թվականին՝ դպրոցի ընթացիկ նորոգման վարպետների կողմից՝ դպրոցի ֆինանսական միջոցների հաշվին: Մարզադահլիճի 2 հանդերձարանները (յուրաքանչյուրը 18 քմ) վերանորոգվել են 2022 թվականին: Հանդերձարանների փոքր մակերեսը դժվարություններ է ստեղծում ֆիզկուլտուրայի դասին նախապատրաստվող և զգեստափոխվող սովորողների համար (միաժամանակ զգեստափոխվում են մոտավորապես 30-35 սովորող): Մարզադահլիճը համալրվել է մարզագույքով 2022 թվականին:

Դպրոցն ունի մեկ հանդիսությունների դահլիճ՝ 250 քմ մակերեսով (վերանորոգվել է դպրոցի ընթացիկ նորոգման վարպետներ և դպրոցի տնտեսած ֆինանսական միջոցների հաշվին):

Յուրաքանչյուր մասնաշենք ունի առանձին բուժկետ՝ համալրված համապատասխան գույքով և դեղորայքով: Բուժքույրերը երկուսն են:





Դպրոցի երկու մասնաշենքերում էլ կա սովորողների սննդի կազմակերպման համար նախատեսված տարածք՝ բուֆետ, որը 2020 թվականի համավարակից հետո մինչ օրս չի գործում: Սովորողների սնունդը կազմակերպելու համար դպրոցը դիմել է Երևանի քաղաքապետին միջնորդությանը՝ աճուրդով դպրոցի բուֆետը վարձակալությամբ տրամադրելու համար:

2018 թվականին առանձնացվել և վերանորոգվել է ուսուցիչների համար նախատեսված բուֆետը:

Երկու մասնաշենքերում էլ առկա են նկուղներ՝ 3326,6 քմ մակերեսով, որոնք մաքրվել, բարկարգվել են և կարող են ծառայել որպես պատասպարաններ: Նկուղներից մեկում առկա է հրաձգարան: Նկուղների մուտքերը դպրոցական շենքի դրսի կողմից են և ուսումնական օդային տազնապների ժամանակ սովորողներին տարհանելիս, դժվարություններ են առաջացնում:

առաջացնում:

- ➔ Դպրոցի երկու մասնաշենքերում էլ ունեն գրադարաններ: Գլխավոր ուսումնական մասնաշենքի գրադարանն ունի նաև ընթերցասարահ, որտեղ անցկացվում են ընթերցանության և ասմունքի մրցույթներ:
- ➔ Բացօթյա սպորտհրապարակները երեքն են՝ բասկետբոլի, վոլեյբոլի և ֆուտբոլի համար նախատեսված: Երեքն էլ գտնվում են անբարեկարգ վիճակում և կարիք ունեն հիմնանորոգման: Գլխավոր ուսումնական մասնաշենքի միջմասնաշենքային հատվածներում առկա են փոքրիկ այգիներ: Այգիներից մեկում կա բացօթյա տաղավար-դասասենյակ, որտեղ անցկացվում են կերպարվեստի, երաժշտության դասեր:
- ➔ Դպրոցի ցանկապատը տեղ-տեղ բացակայում է:
- ➔ Ջեռուցման համակարգը լոկալ է և կենտրոնացված՝ յուրաքանչյուր մասնաշենք ունի առանձին կաթսայատուն: Երկու մասնաշենքերի ջրագծերը և կոյուղագծերն ունեն վերանորոգման կարիք: Էլեկտրական մալուխներն ու էլեկտրասնուցման արկղերը գտնվում են վթարային վիճակում:

Դպրոցի գլխավոր ուսումնական մասնաշենքը գրեթե չունի բակային տարածք: Մուտքից մինչև Մառի փողոց 7 մետր է և շատ հաճախ Մառի փողոցով երթևեկող վարորդների անզգուշության պատճառով դպրոցից տուն գնացող սովորողները համար ստեղծվում է վթարային իրավիճակ:



Գլխավոր ուսումնական մասնաշենքի մուտքի մոտ, միջանցքներում և մարզադահլիճում տեղադրված է 13 տեսախցիկ, ևս 3 տեսախցիկ տեղադրված է շենքի ետնամասում: Տեսախցիկները և տեսաձայնագրող վահանակը ձեռք է բերվել ծնողների կողմից կատարված դրամական օգնության միջոցով՝ «Օգնիր դպրոցիդ» ծրագրի շրջանակներում:

Դպրոցն ունի գրականության, քիմիայի, կեսաբանության, ինֆորմատիկայի, ՆՁՊ-ի, շախմատի, տեխնոլոգիայի երկու և «Սմարթ» գրատախտակով առարկայական կաբինետներ: Քիմիայի, ֆիզիկայի և կեսաբանության կաբինետները կարիք ունեն ժամանակակից լաբորատորյաներով վերազինման:

2023-2024 ուսումնական տարվա սկզբին դպրոցում սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող վեց աշակերտ: Չարգացման ծրագրի կարևոր մասն է կազմում նաև ներառական կրթության կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանն ուղղված գործողությունների իրականացումը :

Դպրոցն օգտվում է Յուրոմ ՓԲԸ-ի կողմից տրամադրվող ինտերնետ կապի կորպորատիվ փաթեթից և Թիմ Տելեկոմ Արմենիա ԲԲԸ- 3 հեռախոսագծից:

ԱՆՎԱՆՈՒՄ	ԶԱՓ/ԸԱՆԱԿ	ՄԱԿԵՐԵՍ (ԸՄ)
Դասասենյակ	45	3061
	1	72
	20	54
	4	46

	3	36.9
	8	31.9
	8	31.4
	1	27.5
<b>Շ</b> <b>Փոքր խմբերի համար նախատեսված դասասանյակներ</b>	9	209
	Ռուսաց լեզու/ 6	127.8
	Անգլերեն/ 3	81
<b>Լարորատորիա</b>	3	54
	Քիմիա	18
	Կենսաբանություն	18
	ՆԶՊ-ի զենքի սահեստ	18
<b>Առարկայական կարիներ</b>	8	397,1
	Քիմիայի	72
	Կենսաբանության	72
	Գրականության	72



	ՆԶՊ	54
	Տեխնոլոգիա -2 հատ	73,1
<b>Առանձնասենյակներ</b>	4	71,1
<b>Արհեստանոց</b>	1	54
<b>Մարզադահլիճ</b>	2	364,1
	Մեծ մարզադահլիճ	291
	Փոքր մարզադահլիճ	73,1
<b>Գրադարան-ընթերցարահ</b>	2	85
	Գլխավոր ուս.մասնաշ.	72
	Առաջին մասնաշենք	13
<b>Համակարգչային սենյակ</b>	1	54
<b>Էլեկտրոնային գրատախտակով կաբինետ</b>	1	54
	3	2681,3

**Օժանդակ (բակ, մարզահրապարակ, տնտեսական շենք և այլն)**

Բակ	450
Կաթսայատուն -2 հատ	44,4
Բասկետբոլի մարզահր.	500
Վոլեյբոլի մարզահր.	400
Ֆուտբոլի մարզահր.	2739
Օժանդակ շինություն	84,7
Տնտեսական մասնաշենք	152,4



**ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԳՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

Հ/հ	ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	Տարեթիվ	Ծախս/դրամ	Ֆինանսական միջոցներ
1	Դպրոցի 2-րդ և 3րդ մասնաշենքերի պատուհան-ների փոխարինման աշխ.	2018	11715998	Պետական բյուջե
2	Տեխնիկական հսկողության աշխատանքներ	2018	235000	Պետական բյուջե
3	Կաթսայատան նորոգում	2018	996980	Պետական բյուջե
4	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում և փորձաքննություն	2018	350000	Պետական բյուջե
5	Դպրոցի վերանորոգման աշխատանքներ	2019	5003702	Պետական բյուջե
6	Հեղինակային հսկողության ծառայություն	2019	31920	Պետական բյուջե
7	Արտաքին կենցաղային կոյուղու ցանցի և սանհանգույցների վերանորոգման աշխատանք-ների տեխ հսկողություն	2019	90000	Պետական բյուջե
8	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում	2019	350000	Պետական բյուջե
9	Դպրոցի պատուհանների մասնակի փոխարինման աշխատանքներ	2019	11471800	Պետական բյուջե
10	Պտուհանների փոխարինման աշխատանքեի տեխ. հսկողություն	2019	229000	Պետական բյուջե
11	Դպրոցի 7-րդ մասնաշենքի պատուհանների մասնակի փոխարին-ման նախագծանախահաշվային աշխատանքներ	2019	120000	Պետական բյուջե

12	Ծինարարական աշխատանքների կատարում	2019	3708400	Պետական բյուջե
13	Դպրոցի պատուհանների փոխարինման աշխատանքների հեղինակային հսկողություն	2019	19300	Պետական բյուջե
14	Հեղինակային հսկողություն Հիդրո սթոմ	2019	60000	Պետական բյուջե
15	Դպրոցի պատուհանների և դռների մասնակի փոխարինման աշխատանքների նախագծանախահաշվային փոստաթղթերի կազմում	2020	350000	Պետական բյուջե
16	Դպրոցի պատուհանների և դռների մասնակի փոխարինման աշխատանքներ	2020	14520000	Պետական բյուջե
17	Դպրոցի պատուհանների և դռների մասնակի փոխարինման աշխատանքների տեխ. հսկողություն	2020	230000	Պետական բյուջե
18	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	2021	195000	Պետական բյուջե
19	Դպրոցի 2 թղ հարկի միջանցքների մասնակի նորոգման աշխատանքներ	2021	4457560	Պետական բյուջե
20	Դպրոցի մասնակի նորոգման աշխատանքների տեխ հսկողություն	2021	123000	Պետական բյուջե
21	Կաթսայատան վերանորոգման աշխատանքներ	2021	850000	Պետական բյուջե
22	Դպրոցի 2 թղ մասնաշենքի հատակի նորոգման աշխատանքների նախագծանախահաշվի կազմում	2021	355000	Պետական բյուջե
23	Նախագծային փաստաթղթերի փորձաքննություն	2021	25000	Պետական բյուջե

24	Դպրոցի 2 ընկերակցի մասնաճյուղի հատակի նորոգման աշխատանքների	2022	8400000	Պետական բյուջե
25	Դպրոցի 2 ընկերակցի հատակի նորոգման աշխատանքների տեխ հսկողություն	2022	250000	Պետական բյուջե
26	Կաթսայատան մասնակի նորոգման աշխատանքներ	2022	943220	Պետական բյուջե
27	Նախագծային աշխատանքների կազմում	2022	40000	Պետական բյուջե
<b>Ընդամենը</b>		<b>2018-2022</b>	<b>65580880</b>	



## SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Գալոսցի շենքային պայմանների զարգացման ներուժը (ներքին գործոններ) բացահայտելու համար իրականացվել է SWOT վերլուծություն, որը հնարավորություն է տվել բացահայտել դրա ուժեղ և թույլ կողմերը, զարգացման հեռանկարային հնարավորություններն ու ռիսկերը (արտաքին գործոններ):

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ	
Ուժեղ կողմեր	Ցածկ կողմեր
<ul style="list-style-type: none"> <li>☉ Վերանորոգված տանիքներ</li> <li>☉ Եվրոպական արտադրության պատուհաններ</li> <li>☉ 2 առանձին ուսումնական մասնաշենք</li> <li>☉ 2 կաթսայատուն</li> <li>☉ Բացօթյա սպորտհրապարակներ</li> <li>☉ Վերանորոգված մարզադահլիճներ և հանդիսությունների դահլիճ</li> <li>☉ Տեսախցիկների առկայություն</li> <li>☉ Վերանորոգված համակարգչային դասասենյակ</li> <li>☉ «Սմարթ» գրատախտակով դասասենյակ</li> <li>☉ Ա.Միկոյանի հուշարահ</li> <li>☉ Փառքի հուշարահ</li> <li>☉ Անվանակոչված դասասենյակներ</li> <li>☉ Վերանորոգված ուսուցչանոցներ երկու մասնաշենքերում</li> <li>☉ Գլխավոր ուսումնական մասնաշենքի լուսավոր և ընդարձակ դասասենյակներ</li> <li>☉ Առաջին մասնաշենքի վերանորոգված հատակ</li> <li>☉ Նկուղների առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>☉ Մասնաշենքերի փողոցի տարբեր կողմերում գտնվելը</li> <li>☉ Մասնաշենքերի իրար կապող միջանցքի բացակայություն</li> <li>☉ Առաջին մասնաշենքի տիպային չլինել</li> <li>☉ Փողոցին շատ մոտ գտնվելը</li> <li>☉ Տարրական դասարանների համար նախատեսված դասասենյակների փոքր մակերես</li> <li>☉ Բացօթյա սպորտհրապարակների անբարեկարգ վիճակ</li> <li>☉ Բակային փոքր տարածքը</li> <li>☉ Սանհանգույցների քանակի սակավություն</li> <li>☉ Հանդերձարանների փոքր մակերեսներ</li> <li>☉ Նկուղային հատվածում ջրագծերի և կոյուղագծերի անմխիթար վիճակ</li> <li>☉ Էլեկտրական մալուխների և էլեկտրասնուցման արկղի վթարային վիճակ</li> <li>☉ Երկարօրյա պարապմունքների համար նախատեսված դասասենյակների բացակայություն</li> </ul>

<ul style="list-style-type: none"> <li>⊗ Բարեկարգված պատսպարաններ</li> <li>⊗ 2 գրադարանների առկայություն</li> <li>⊗ Քիմիայի և կեսաբանության առանձին կաբինետներ</li> <li>⊗ Վերանորոգված միջանցքներ</li> <li>⊗ Վերանորոգված սանհանգույցներ</li> </ul>		
<b>ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ</b>		
<b>Հնարավորություններ</b>	<b>O</b>	<b>T</b>
<ul style="list-style-type: none"> <li>⊗ Հիմնանորոգում պետական ծրագրերով</li> <li>⊗ Արտաբյուջետային դրամական միջոցների հայթայթում դպրոցի շրջանավարտների միավորման և ծնողական համայնքի աջակցությամբ</li> </ul>		<ul style="list-style-type: none"> <li>⊗ Տնտեսական ճգնաժամով պայմանավորված դպրոցի ֆինանսական միջոցների խնայողությունների սառեցում լիազոր մարմնի համապատասխան վարչության կողմից</li> <li>⊗ Ֆինանսավորման կարգի (բանաձևի) փոփոխություն(դասարանների թվով ֆինանսավորում)</li> <li>⊗ Ծենքի պահպանման ծախսերի համար հատկացվող ֆինանսական միջոցների նվազեցում</li> <li>⊗ Դասասենյակների մակերեսների անհամապատասխանությունը նորմատիվներին և աշակերտական սեղանների շատ մոտ լինելը գրատակտակին կհանգեցնի սովորողների տեսողության խանգարման(կարճատեսության առաջացում)</li> </ul>

Համեմատելով SWOT վերլուծության չորս բաժիններում նշված արտաքին և ներքին գործոնները և, ամփոփելով տվյալ գործոնների փոխկապակցվածության հնարավորությունները, սահմանվել են նպատակներ և խնդիրներ , ռիսկերի ազդեցությունը մեղմող

(չեզոքացնող) գործողություններ և առանձնացվել է առաջիկա հինգ տարիներին նախատեսվող ռազմավարական գործողությունների այն ցանկը, որը բերելու է դպրոցի շենքային պայմանների բարելավմանը.

## ՆՊԱՏԱԿ



Ապահովել այնպիսի շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա, որը կնպաստի կրթական բարեփոխումներին համապատասխան ուսումնական միջավայրի ստեղծմանը:

## ԽՆԴԻՐՆԵՐ



- ⊗ Դպրոցի շենքային պայմանների բարելավում
- ⊗ Հանրնդհանուր ներառման համար հարմարեցված ուսումնական միջավայր

## ՌԻՍԿԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ



- ⊗ Վարչատնտեսական մասի համակարգողի հետ կարիքների ճիշտ գնահատում և համագործակցություն
- ⊗ Ֆինասական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը
- ⊗ «Օգնիր դպրոցին» ծրագրի վերագործարկում



ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ



Հ/հ	Գործողություններ	Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ	Ֆինանսական աղբյուրներ	Արդյունքների գնահատման չափանիշ	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Վերահսկողական մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ
1	Կառավարման առանձնացված ղեկավարման անցնելուց հետո գործառնությունների հստակեցում	Ներքին իրավական ակտեր	Ներքին մարդկային ռեսուրսներ	Գործառնությունները հստակ պատկերացնող և մինչև նույն գաղափարի շուրջ համախմբվող տնօրեն , վարչատնտեսական համակարգող, աշխատակազմ	2023 թվականի դեկտեմբեր	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	Կառավարման խորհուրդ Տնօրենի հաշվետվություն Վարչատնտեսական համակարգողի հաշվետվություն
2	Բացօթյան մարզահրապարակների վերանորոգում	Վերանորոգում իրականացնելու համար անհրաժեշտ շինարարական նյութեր, շինարարական տեխնիկա	Պետաբյուջե, վարձակալություններ ընդ գոյացած ֆինանսական միջոցներ	2000քմ սպորտային նպատակով օգտագործվող տարածքի յիարժեք վերանորոգում	2024- 2028թթ	Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող	Լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանում, Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ
3	Առաջին մասնաշենքի բակային տարածքի բարեկարգում	Վերանորոգում իրականացնելու համար անհրաժեշտ շինարարական նյութեր, շինարարական տեխնիկա	Պետաբյուջե, վարձակալություններ ընդ գոյացած ֆինանսական միջոցներ	238 քմ բակային տարածքի ասֆալտապատում	2024-2028թթ	Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող	Լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանում, Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ

4	Բացակայող ցանկապատերի վերականգնում	Վերանորոգում իրականացնելու համար անհրաժեշտ շինարարական նյութեր, շինարարական տեխնիկա	Պետաբյուջե, վարձակալություններից գոյացած ֆինանսական միջոցներ	500 գծամետր բացակայող ցանկապատի վերականգնում, եռակցում	2024-2026թթ	Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող	Լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանում, Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ
5	Գլխավոր ուսումնական մասնաշենքի մանրահատակի փոխարինում սալահատակով	Վերանորոգում իրականացնելու համար անհրաժեշտ շինարարական նյութեր, շինարարական գործիքներ	Պետաբյուջե	Մոտավորապես 17000քմ մակերեսով տարածքի հին մանրահատակի հետացում և սալիկապատում	2024-2028թթ փուլերով, մաս-մաս	Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող	Լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանում Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ
6	Դասասենյակների վերանորոգում և փայտյա դռների փոխարինում եվրոպական արտադրության դռներով	Վերանորոգում իրականացնելու համար անհրաժեշտ շինարարական նյութեր, շինարարական գործիքներ	Պետաբյուջե, վարձակալություններից գոյացած ֆինանսական միջոցներ	Յուրաքանչյուր ֆինանսական տարի 8-10 դասասենյակի դռների փոխարինում և 10 դասասենյակի վերանորոգում	2024-2028թթ	Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող	Լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանում, Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ
7	Նկուղային հատվածում կոյուղագծերի և ջրագծերի վերանորոգում	Վերանորոգում իրականացնելու համար անհրաժեշտ շինարարական նյութեր, շինարարական գործիքներ	Պետաբյուջե, վարձակալություններից գոյացած ֆինանսական միջոցներ	500մ երկարությամբ ջրագծերի և կոյուղագիծերի վերանորոգում	2024-2028թթ	Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող	Լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանում Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման և ֆինանսական հաշվետվություններ

